Известия НАН РА, Науки о Земле, 2004, LVII, №3, 62-64

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ռ. Տ. ՋՐԲԱՇՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Լրացավ երկրաբանության բնագավառում ճանաչված գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, հանքաբանա-միներալոգիական գիտությունների դոկտոր Ռուբեն Տիգրանի Ջրբաշյանի ծննդյան 70-ամյակը:

Ռ.Ջրբաշյանը ծնվել է 1934թ. դեկտեմբերի 13-ին, Երևանում, անվանի երկրաբան, Երևանի պետական Համալսարանի երկրաբանական ֆակուլտետի հիմնադիր, Հայաստանի Երկրաբանական ծառայության երախտավորներից մեկի՝ պրոֆ. Տիգրան Ջրբաշյանի ընտանիքում:

1957թ. Ռ.Ջրբաշյանը գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ երկրաբանական ֆակուլտետը և աշխատանքի անցել ՀԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պետրոգրաֆիայի բաժնում: 1958-ից սովորել է Մոսկվայի ԽՍՀՄ ԳԱ Մետաղային հանքավայրերի երկրաբանության, պետրոգրաֆիայի, միներալոգիայի և երկրաքիմիայի ինստիտուտի (ИГЕМ АН СССР) ասպիրանտուրայում, որտեղ 1964թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

1990թ. Ռ.Ջրբաշյանը Կովկասի հանքային հումքի գիտահետազոտական ինստիտուտում (КИМС) պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ նվիրված Հայաստանի և հարակից տարածքների պալեոգենյան հասակի հրաբխականության և երկրադինամիկական իրադրությունների փոխկապակցվածության խնդիրներին:

Ռ.Ջրբաշյանի երկարամյա աշխատանքային գիտական գործունեությունը կապված է ՀՀ ԳԱԱ ԵԳԻ հետ, ուր նա անցել է գիտական աշխատողի, հրաբխագիտության բաժնի վարիչի (1989թ.) և 1993թ.-ից մինչ այսօր՝ Ինստիտուտի տնօրենի ուղին:

Նրա հետազոտությունները ընդգրկում են երկրաբանական հիմնահարցերի լայն շրջանակ և վերաբերվում են Հայաստանի և Հարավային Կովկասի երկրակեղևի ձևավորման ընթացքում հրաբխականության դերի պարզաբանմանը, հատկապես կայնոզոյան հրաբխականության զարգացման օրինաչափություններին, հրաբխականության և տեկտոնիկայի փոխկապակցվածությանը, տարբեր տեկտոնական կառույցներում հրաբխային գոյացումների տիպերին, նրանց ձևավորման պայմաններին, ժամանակի ընթացքում ապարների նյութական կազմի փոփոխություններին, տարբեր հասակային և երկրադինամիկական պայմաններին բնորոշ հրաբխային շարքերի առանձնահատկություններին, դասակարգմանը և այլն:

Նախկին ԽՍՀՄ մի խումբ ճանաչված գիտնականների հետ համատեղ Ռ.Ջրբաշյանը մեծ ավանդ ունի երկրաբանական նոր հնահրաբխականություն ուղղության ձևավորման ասպարեզում: Նա ամբողջ ԽՍՀՄ տարածքի առաջին և եզակի Հնահրաբխական տարբեր հասակային կտրվածքների 1:10000000 մասշտաբի ատլասի հեղինակներից և խմբագիրներից մեկն է:

Ավելի քան երկու տասնամյակ Ռ.Ջրբաշյանի և Կ.Մուրադյանի կողմից զարգացվում և մշակվում են երկրաբանական վաղ հասակների հրաբխատեկտոնական կառույցների ուսումնասիրման, դասակարգման և հանքաձևավորման ընթացքում նրանց նշանակության խնդիրները:

Վերջին տարիներին նա սերտորեն զբաղվում է Հայաստանի տարածքի համար մեծ կարևորություն ունեցող երկրաբանական վտանգավոր երևույթների շարքում նորագույն հրաբխականության ուսումնասիրմամբ, մասնավորապես հրաբխային վտանգի և ռիսկի գնահատման հարցերով, որոնք անմիջականորեն ծառացան Հայաստանի առջև 90-ական թվականների կեսերին՝ կապված ատոմակայանի վերագործարկման հետ և շարունակում են մնալ նրա անվտանգությունն ապահովող գործոնների շարքում:

Զգալի է Ռ.Ջրբաշյանի ավանդը 1988թ. Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո բազմաթիվ երկրներից Հայաստան ժամանած սեյսմաբանների գիտական համագործակցության կազմակերպման գործում, ինչը մեծապես նպաստեց Հայաստանում սեյսմաբանական գիտական հետազոտությունների զարգացմանը և այդ ասպարեզում գործնական քայլերի նախաձեռնմանը:

Ռ.Ջրբաշյանը հեղինակ և համահեղինակ է ավելի քան 120 գիտական հոդվածների, այդ թվում 7 մենագրությունների: Այդ աշխատություններից շատերը հրատարակվել են Եվրոպական և Ռուսական գիտական պարբերականներում: Ռ.Ջրբաշյանը բազմիցս ներկայացրել է Հայաստանի երկրաբանական գիտության նվաճումները միջազգային գիտաժողովներում, ճանաչված է և մեծ հեղինակություն է վայելում միջազգային գիտական հանրության շրջանակներում:

1986-91թթ. Ռ.Ջրբաշյանը հանդիսանում էր

Կովկասի հնահրաբխագիտության հանձնաժողովի նախագահ: Նրա ջանքերով հրաբխականության ուսումնասիրությունները Կովկասում բերվեցին նոր, գիտական ժամանակակից պահանջներին համապատասխան մակարդակի:

1993թ-ից Ռ.Ջրբաշյանը Հրաբխագիտության և Երկրագնդի ընդերքի քիմիայի Միջազգային ասոցիացիայի (IAVCEI) Հայաստանը ներկայացնող անդամն է:

Գիտական գործունեությանը զուգընթաց վարում է զգալի գիտա-կազմակերպչական աշխատանք՝ 2001թ.-ից ՀՀ ԳԱԱ "Գիտություններ երկրի մասին" տեղեկագրի պատասխանատու խմբագիրն է, Հայաստանի երկրաբանական ընկերության նախագահը, ՀՀ ԳԱԱ Նախագահության անդամ, գիտական աստիճանաշնորհման 054 Մասնագիտական խորհրդի նախագահ, ինչպես նաև՝ ՀՀ Ազգային Խորհրդի նախագահին առընթեր գիտության հարցերով հանձնաժողովի անդամ և այլն: 1994-2003թթ. պրոֆեսորի պաշտոնով դասավանդել է հրաբխագիտություն առարկան ԵՊՀ Երկրաբանական ֆակուլտետում, ղեկավարել ասպիրանտական աշխատանքներ:

Ռ.Ջրբաշյանը մեծ աշխատանք է կատարում Ինստիտուտի միջազգային գիտական համագործակցության ընդլայնման գործում և անմիջական մասնակցություն ունի Վրաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Հունգարիայի, Հունաստանի գիտական կենտրոնների և համալսարանների հետ համատեղ կատարվող աշխատանքներում:

Վերջին տարիներին հանրապետությունում ստեղծված բարդ իրավիճակում, ղեկավարելով Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, Ռ.Ջրբաշյանը մեծ ջանքեր է ներդրել՝ պահպանելու հանրապետության միակ երկրաբանական գիտահետազոտական օջախը: Բարյացկամ է, պահանջկոտ, արդարացի և սկզբունքային, ինչի շնորհիվ վայելում է գործընկերների մեծ սերն ու հարգանքը:

Բազմամյա բեղմնավոր աշխատանքի համար Ռ.Ջրբաշյանը 1980-1985թթ. արժանացել է ԽՍՀՄ կառավարության մի շարք պարգևների, Ամերիկայի Հայկական գիտական և ճարտարագիտական ընկերության Վ.Համբարձումյանի անվ. մրցանակի (1994), Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Պ.Կապիցայի և Ա.Էյնշտեյնի անվան հուշամեդալների (1998, 2002), ՀՀ Կառավարության Անանիա Շիրակացու անվան մեդալի (2003):

Իր հոբելյանը Ռ.Ջրբաշյանը դիմավորում է նոր ստեղծագործական մտահղացումներով: Գործընկերները և բարեկամները ի սրտե մաղթում են Ռ.Ջրբաշյանին քաջ առողջություն, ստեղծագործական նոր նախաձեռնություններ և ամենայն բարիք:

ՀՀ ԳԱԱ Նախագահություն
ՀՀ ԳԱԱ ՖՄՏԳ բաժանմունք
ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Տեղեկագրի "Գիտություններ երկրի մասին" հանդեսի խմբագրական կոլեգիա

К 70-ЛЕТИЮ АКАДЕМИКА НАН РА Р. Т. ДЖРБАШЯНА

Известному ученому-геологу, академику НАН Армении, действительному члену Российской академии естественных наук, директору Института геологических наук НАН Армении, доктору геолого-минералогических наук Рубену Тиграновичу Джрбашяну исполнилось 70 лет со дня рождения.

Р.Джрбашян родился 13 декабря 1934г. в Ереване, в семье одного из пионеров геологической службы Армении, основателя геологического факультета Ереванского государственного университета, профессора Тиграна Джрбашяна.

В 1957г., с отличием окончив геологический факультет Ереванского государственного университета, Р.Джрбашян поступил на работу в отделе петрографии Института геологических наук АН АрмССР. С 1958г. проходил аспирантуру в Москве, в Институте геологии рудных месторождений, петрографии, минералогии и геохимии (ИГЕМ АН СССР). Здесь же в 1964г. успешно защитил кандидатскую диссертацию.

В 1990г. Р.Джрбашян в Тбилиси, в Кавказском институте минерального сырья (КИМС), защитил докторскую диссертацию, посвященную проблемам взаимосвязи палеогенового вулканизма и геодинамики территории Армении и сопредельных областей Передней Азии.

Многолетняя научная деятельность Р.Джрбашяна связана с ИГН НАН Армении, где он прошел путь от научного сотрудника, заведующего отделом вулканологии (1989), директора Института ИГН НАН Армении с 1993г. по настоящее время.

Научные интересы Р.Джрбашяна охватывают широкий круг геологических проблем, актуальных для территории Армении и смежных областей Южного Кавказа. В частности, они касаются выявления роли вулканизма в формировании Земной коры, закономерностей развития кайнозойского вулканизма, взаимосвязи вулканизма и тектоники, типов вулканических образований и условий их формирования в различных тектонических структурах, эволюции,

вещественного состава и химизма вулканических серий во времени и в пространстве в различных геодинамических обстановках и т.д.

Совместно с группой ведущих ученых геологов бывшего СССР, Р.Джрбашян внес существенный вклад в формирование нового, палеовулканологического направления в геологии. Он один из соавторов и соредакторов единственного Палеовулканологического атласа территории СССР масштаба 1:10000000.

Более двух десятилетий Р.Джрбашян, совместно с доктором геол.-мин. наук К.Мурадяном, разрабатывал вопросы строения, состава и систематики вулкано-тектонических структур альпийского тектоно-магматического этапа, а также их роли и значения в процессах рудогенеза.

В последние годы он вплотную занимается актуальными для территории Армении проблемами опасных геологических процессов и, в частности, вопросами оценки вулканической опасности и риска. Необходимость таких разработок, в которых Р.Джрбашян принимает активное участие, возникла в середине 90-х годов, в связи с восстановлением работы Армянской АЭС, и продолжает оставаться актуальной.

Значителен вклад Р.Джрбашяна в деле организации международного сотрудничества ученых сейсмологов, прибывших в Армению сразу после Спитакского землетрясения в 1988г. Это сотрудничество значительно стимулировало развитие в Армении сейсмологических научных исследований на современном уровне и разработку различных практично-организационных шагов.

Р.Джрбашян является автором и соавтором более чем 120 научных статей, в том числе 7 монографий. Многие из его статей опубликованы в научных журналах России и Европы. Р.Джрбашян многократно представлял достижения геологической науки Армении на международных конгрессах, симпозиумах и конференциях и пользуется большим авторитетом в научном сообществе.

С 1993г. Р.Джрбашян – член Международной ассоциации вулканологии и химии недр Земли (IAVCEI) и достойно представляет Армению в этой ассоциации.

В 1986-1991гг. Р.Джрбашян, будучи председателем Палеовулканологической комиссии Кавказа, активно способствовал развитию подобных исследований в регионе.

Параллельно с научной деятельностью он ведет большую научно-организационную и педагогическую работу. Он – ответственный редактор Известий НАН Армении, серии «Науки о Земле» (2001г.), член Президиума НАН Армении, председатель Специализированного совета 054 по присуждению ученых степеней, президент Армянского геологического общества. 1994-2003гг. Р.Джрбашян в должности профессора преподавал курс вулканологии на геологическом факультете ЕГУ, руководил аспирантами.

Большую работу проводит Р.Джрбашян по организации международного научного сотрудничества ИГН с научными институтами, центрами и университетами России, Грузии, Франции, Греции, США, Венгрии и часто принимает непосредственное участие в совместных разработках.

В последнее десятилетие, на должности директора Института геологических наук, Р.Джрбашян прилагал и прилагает большие усилия для сохранения работоспособности научного коллектива и обеспечения современного научного уровня работ единственной в республике геологической научно-исследовательской организации.

Р.Джрбашян доброжелателен, требователен к себе и коллегам, справедлив, потому заслуженно пользуется большим уважением среди коллег и сотрудников в Армении, а также ученых-геологов за ее пределами.

Оценкой многолетней добросовестной деятельности Р.Джрбашяна стало награждение его в 1980-85гг. несколькими медалями бывшего СССР, присуждение премии В.Амбарцумяна Армянского общества ученых и инженеров США (1994г.), награждение памятными медалями РАЕН им. академиков П.Капицы и А.Эйнштейна, а в 2003г. он награжден медалью им. Анания Ширакаци.

Свой юбилей Р.Джрбашян встречает новыми творческими планами и начинаниями. Коллеги и друзья искренне желают Р.Джрбашяну крепкого здоровья, новых творческих успехов и всего самого доброго в жизни.

Президиум НАН РА,
Отделение ФМТН НАН РА,
Институт геологических наук НАН РА,
Редколлегия журнала Известия НАН РА,
Науки о Земле.